ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **23.06.2020 թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ղեկավարի կողմից բարձրացված՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագծին ԱԱՏՄ կառավարման խորհրդի (Խորհուրդ) կողմից հավանություն տալու վերաբերյալ հարցը Խորհրդի անդամներ՝ Զ. Բաթոյանի, Լ. Նանուշյանի, Ա. Ասոյանի, Ա. Ավանեսյանի, Ք. Գրիգորյանի, Կ. Բրուտյանի, Գ. Գրիգորյանի առաջարկներով որոշվել է իրականացնել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2020 թվականի հունիսի 22-ին և ավարտվել 2020 թվականի հունիսի 23-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարց

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Զ. Բաթոյան	-	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	-	Առողջապահության նախարարի տեղակալ

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Շ. Դանիելյան - Երևանի՝ Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի աշխատակազմի ղեկավար

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան Հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Զ. Բաթոյանը քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց կողմ (**դիրքորոշումը կցվում է**),
3) Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4) Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
5) Ք. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6) Կ. Բրուտյանը քվեարկեց կողմ (**դիրքորոշումը կցվում է**),

7) Գ. Գրիգորյանը քվեարկեց դեմ (**դիրքորոշումը կցվում է**):

Քվեարկության արդյունքը՝ 6 կողմ, 1 դեմ:

Խորհրդի անդամներից 3-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծին տալ հավանություն:

Recoverable Signature

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 Զ. ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ